

և ուղիւրութեանց և կրօնական կարծեաց կամ համոզմանց նկատմամբ ցատուերկու խնդիրք քննուեցան. այսինքն բազմակնութիւն, ամուսնալուծութիւն, խառն ամուսնութիւնք, արգիլեալ արուեստք կամ շահադիտութիւնք և այլ բազմաթիւ խնդիրներ :

Շարունակելի

ՅՈՎՍԷՓ ՅԵ — ԱՄԻՔԵՐՍ

ՄԱՆԿՈՒԹԻՒՆՆ

ԺՈՂՈՂՐԴԱԿԱՆ ԴԱՄԱԿԱՐԳԻ ՄԷ

(Տես յէջ 112)

ՄԱՅՐ

ՁԱՒԱԿԱՆ դաստիարակութեան զլիաւոր մասը մայրերէն կա. խումն ունի. որդիք ծնանիլն իրենց համար մեծ արդիւնք մը չէ, այլ զանոնք զարգացընելուն և անոնց լաւ կրթութիւն տալուն մէջ կը կա. յանայ իրենց աւաքինութիւնն և ստոյգ փոխարինութիւնն: Քանի մը պարագաներու օակաւադէպ բացառութենէն դուրս, իրենց նուիրաւ կան և սուրբ պարտք մ'է զաւակին մնուցանել. և զայս կըսենք նաև բարեկեցիկ մարց համար. իրենք պիտի աւղղեն նոցա առաջին քայլերն, որովհետև որդւոց կրթութիւնը մայրերուն ծնկաց վրայ կ'ըս. կըսի և հոն կ'որորի հայրենեաց ճակատագիրն :

Ամէն կրթոյթիւն 'ի մօրէն — կ'ըսէ Արիստոտէլ իր գրութեան մէջ, և Դեմոսթենէս ուզեց Աթինքի մեծ տիկնոջ մը դատապարտութիւնն, որ վարձկան օտար կնոջ դիեցնել կու տար իր որդին :

Գուցէ Ներոն այնքան վայրագ չէր մեծնար, եթէ պինքը սնուցաւ. նոյ զայեակն ախտաւոր և դինով չըլլար, և ոչ այնչափ զգուելի կա.

րակալա, եթէ սնուցիչ դայեակն անոր միտումը դիւրացընելու, համար, ինչպէս Թէոդորոս կը պատմէ, կուրծքն արեամբ չծանէր:

Էնով մայրութեամբ կը զարգանայ տղայն և ազնուաբարոյ կ'ըլլայ, և ժամանակին մեծ պատասխանատուութիւն կ'առնու վրան. նա իր ձեռաց մէջ ունի ապագային համար գործ մը՝ որուն համար պատասխան պիտի տայ, ինքնին կատարելով կենսական գործողութեանց ամենէն գոյարարին և ամենէն ազնուականն, որ է կեանք տալ արարածոյ մը՝ իրենը կորուստնելու վտանգաւ, սնուցանել զինքը, կըրթել բարբը, սիրտը և ոգին ուղղել:

Բարի մայրն կատարելութեան գաղափարականն է. պաշտօնեայ մ'է նա Նախախնամութեան, ընտանեաց առաջնորդն, յաճախ նեցուկն և հանապազորդ ուրախութիւնը. վասն զի իր պայծառ ճակատէն երկնային լուսոյ ճառագայթ մը կ'արծակի որ կը ջօրացընէ տկարները, յանդուգնը կը զգոնայընէ, տառապնոց մխիթարութիւն կու տայ և զամէնքն ընտանեկան ներքին անխառն ուրախութեանց նուիրական սեղանը կը հրաւիրէ:

Մայրական գործը ամէն գութերէն աւելի գովելին է, ամենէն աւելի զարմանաց և յարգութեան արժանի. և ոչ իսկ ամուսնական սէրը կարող է խոր արմատ ձգել այն կնոջ սրտին մէջ՝ որչառզգայուն չէ առ ձայն բնութեան: Մայրերուն իրենց որդւոց վրայ ունեցած սէրն ամենէն աւելի բուռն և գերազանց է. իսկ որդւոց սէրն առ մարս — եթէ ունին — ճրչափ պակաս է քան ինչ որ պէտք էին ունենալ: Ուր որ տեղի չեն ունենար թշնամանք և անիրաւութիւն, յաճախ ասոնց տեղը կը բռնեն այնպիսի անփութութիւն և անտարբերութիւն՝ որ խիստ դառն են գործվագութիւն սրտի մը համար:

Մօր մը նախազգուշութիւններն ու խնամքն իր զաւակն 'ի լոյս տալէն առաջ պէտք է սկսին, և իրեն և ուրիշին աղէտալի հետևանաց առջին առնուլ. ուստի մեծագոյն ևս խնամոց պարտք ունին իրենց զաւակաց վրայ՝ սկսեալ անոնց կենաց առաջին վայրկեաններէն, գիտնալով՝ զիրաւիտաս փափկութիւնն՝ որով փոքր անխոհմտութիւն մը կրնայ անոնց կեանքն 'ի մահ փոխել:

Քանի քանի վտանգներէ պաշարուած չէ մեր խեղճ տղայոց կեանքը. ինչպէս շատ անգամ գերեզմանն որորանին քով կը գտնուի. որչափ մեծ պէտք է ըլլայ մայրական սէրն, որ անձնանուիրութեամբ և մոռողի յօժարութեամբ այնքան ներքին և արտաքին թշնամեաց դէմ կ'արենայ պատերազմիլ:

Բարի մայրն յօժարութեամբ և անձկանօք իր մանկիկը սնուցանելէն և բազկացը մէջ որորելէն վերջը, անոր քուն եղած ատեն քովի կը հսկէ, և գիտէ որ քիչ մը ետքը պիտի վարթնու գեղեցիկ հրեյտականման, և սիրալից աղապատանօք պիտի փոխարինէ անոր ծնանելու ատեն իր կրած ցաւերուն տեղ: Նա յետ բնականին կը

մատակարարէ անոր նաև բարոյական կեանք, կրօնական և մտաւորական կրթութեանց առաջին սերմանքն անոր սրտին մէջ ձգելով. բարի մայրիկները պէտք է սորվեցը՝ են թէ բանիւ և թէ օրինակաւ, և անոնց բարեբախտ մանկիկներն ուրիշ ընելիք չունին՝ բայց հետեւիլ.

Տղուն մէջ մարդկութեան ամենէն աւելի սիրելի յոյսերն և ամենէն աւելի աշխուական խոստմունք կան. Աստուածային զգացմամբ ամենասիրուն է Գրիստոսի այս խօսքն. — « Թոյլ տուք մանկաւորդ դալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից »: — Խեղճ տղաք. շատ ստոյգ է որ անոնց ամբողջ թուոյն կէս մասն եօթը տարեկան չեղած կը մեռնի. վիճակագրութիւններէ շուցուած իրականութիւն է, որ վատաւորող տուններն, ֆլանսակար կերակուրներն, տարածամ աշխատութիւնը, բռնական և ճնշիչ գարոցներն և կըրթութեանց տաղտկալի միջոցներն՝ այսպիսի պատահարաց թիւը կը բազմապատկեն:

Ընթե՛ք այս բազմաթիւ մահերուն մաս մը պէտք չէ ընծայել անոնց որոց յանձնուած է զլիաւորապէս մանկութեան խնամքն. այսպիսի դժբաղդ էակաց բարոյական չարիքն ևս ֆիզիքական ֆլանսներէն պակաս չեն. և յիրաւի, առաջին տպաւորութիւնները դիւրաւ չեն ջնջուիր. և շատ անգամ տղան իր մօրէն ընդունած է այն չար մղումն՝ որ ապագային մէջ բարոյական աղետալից հետեանքներ յառաջ բերած է:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՔԵՐՈՎԲԷ ՊԱՏԿԱՆԵԱՆ

(Վեսելովսկիի գրուածէն կը քաղենք առաջիկայ յօդուածս):

Տէր Պետրոս Պատկանեանի անդրանիկ որդին, Քերովբէ Պատկանեան ծնաւ ի Նախիջևան Դոնի վրայ՝ 1833 տարւոյն մայիս 4ին: Իւր ծննդեան տարի ու կէս վերջը Տէր Պետրոս գաղթեցաւ ի Ստաւրոպոլ. Քերովբէ Պատկանեանի հայրը յաճախ կը մեկնէր տունէն այլ և այլ պարտաւորեալ պաշտամանց պատճառաւ, որով այն ժամանակներն սղոց կրթութեան խնամքը՝ մօր վրայ կը մնար. իսկ տունը գտնուած միջոցը վրան այնպէս հսկողութիւն կ'ընէր և այնպէս կը կըրթէր բարի վարուց մէջ, որ յետոյ կատարելապէս պանծաց անոնցմով:

Իրենց բնակութեան տեղւոյն անյարմարութեան համար տղաքը այնչափ ազատութիւն չունէին. որով փոքրիկ Քերովբէն ոչ սակաւատեն փողոցը անցուց, իւր հասակակցաց հետ՝ դարուկոն, վէգ և այլ ուրիշ տղայական հասակի վերաբերեալ խաղեր խաղալով. Այս